

որուն մօտեցած է Սիամանթոն¹⁴, Ուոլթ Ուիթմանի համար ալ ըստուած է թէ թատերական արմատներ ունէր¹⁵:

Այս բոլորէն կը հետեւի թէ Սիամանթոնի Դիւցազնորէնը կրնար եւ կամ կըրնայ դեռ փոխադրուիլ բեմի վրայ: Յատկապէս կրնայ ծառայել գործի մը: Երգախառն թատրոնի երաժշտական այդ գծին վրայ, որ Վահներէն դէպի Շոնպէրի կ'երկարի՝ անցնելով Ռիչարտ Շթրաուսէն, կայ կէտ մը, ուր կրնար զետեղուիլ, Սիամանթոնի Դիւցազնորէնէն առնուած՝ երգախառն ներկայացում մը. նման բան մը կարելի պիտի ըլլար եթէ հանճարեղ երաժիշտ մը ձեռնարկած ըլլար այդ գործին՝ այնպէս ինչպէս Ռի-

չարտ Շթրաուս ըրաւ Հիւկոյ Հօֆմանշթալի ելեկտրաով:

Սիամանթոնի գործականօրէն եւ դրականօրէն տարուած է տեսարանային հետաքրքրութենէ. ասիկա կը հաստատուի իր մէկ անտիպ եւ անաւարտ՝ երեք արար թատրոնով, որ իբր խորագիր կը կրէ ընտանիք կամ աւերումի օրեր¹⁶. յատկանշական եւ կարեւոր կը նկատենք այս թատրոնը, յատկապէս անոր համար որ երկու զանազան տարբերակներով մեղի հասած է. բան մը որ կ'ապացուցանէ Սիամանթոնի թատերական խնամքն ու մտահոգութիւնը:

(Շար. 1)

Կ. Վ.

14. «Այսպէս է նաեւ Ուոլթ Ուիթման եւ եթէ չեմ սխալած՝ Եարճանեանի ամէնէն սիրած վարպետն է ան...»: Տե՛ս Հ. ՍԻՄՈՆ ԵՐԵՄԵԱՆ, Ատոմ Եարճանեան, Բազմավէպ, Թիւ 6, Յունիս 1908, էջ 28:

15. Հմմտ. F. O. MATHIESEN, *American Renaissance*, Oxford University Press, New York, 1941:

16. ԳՈՀԱՐ ԱԶՆԱՎՈՒՐԵԱՆ, Սիամանթոնի արխիւը, Գրական թերթ, Թ. 3 (1175), 18 Յունուար 1963:

Հ. Մ. ՉԱՄՉԵԱՆԻ ԴԵՐԸ ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒԻ ՇԱՐԱՀԻՍՈՒԹԵԱՆ ՉԱՐԳԱՅՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Հ. Մ. Չամչեանի «Քերականութիւն Հայկազեան լեզուի» աշխատութիւնը հրատարակուել է բազմաթիւ անգամ, սակայն միշտ պահպանելով նոյն վերնագիրը: Այսպէս՝ այս գիրքը առաջին անգամ տպագրուել է 1779 թուականին Վենետիկում, դրանից յետոյ 1801 թուականին՝ դարձեալ Վենետիկում, 1824, 1826 թուականներին՝ Տիփլիսում, 1824, 1830 թուականներին՝ Կարկաթայում, 1833, 1859 թուականներին՝ Շուշի քաղաքում եւ 1859 թուականին՝ Մոսկուայում ու Վենետիկում:

Սկզբունքային բոլոր հարցերը, անխտիր բոլոր հրատարակութիւններում, նոյնն են մնացել, սակայն հեղինակներից որպէս օրինակ բերուած նախադասութիւնները եւ բացատրութիւնները մասնակի փոփոխութիւններ են կրել՝ կամ լրացուել են եւ կամ կրճատուել: Մեր ասածը հաստատում է նաեւ ինքը՝ քերականը:

1859 թուականին Մոսկուայում հրատարակուող գրքի առաջարանում քերականը գրում է. «... կամեցաք զնոյն զայն քերականութիւն նորոգ իմն համառօտութեամբ ի լոյս ընծայել, զոր եւ արարաք իսկ յամի տեսուն 1801 առանց փոփոխելոյ զկարգ նորա, եւ առանց չփոխելոյ զընթացս նորին՝ բայց եթէ ի սակաւ տեղիս, յորս ընդարձակէին բանք, եւ առաւելուին կանոնք, եւ յորդեալ զեղուին օրինակք:

Եւ այժմ վերստին ուղղադրեալ զնոյն, եւ առաւել եւս համառօտեալ՝ առաջի մա-

տուցաք համբալաց առ ճիշտ դանձելոյ նոցա զուսումն քերականութեան ի միտս իւրեանց»¹:

Այս վերջին նշումն էլ վերաբերուում է Մոսկուայի հրատարակութեանը, որը, իրօք, Վենետիկի նախորդ թուականների հրատարակութիւնների համեմատութեամբ աւելի է կրճատուած:

Չամչեանը հետաքրքիր կարծիք է յայտնել լեզուի՝ իբրեւ հասարակական երեւոյթի մասին: «Առ բանաւորապէս վարելոյ մարդկան ընդ միմեանս ըստ քաղաքական կենաց հարկ էր յայտնել իւրեանց զխորհուրդս մտաց իւրեանց ի ձեռն խօսից», - գրում է նա²:

Ինչպէս նկատում ենք, Մ. Չամչեանը ճիշտ է նկատել: Իրօք, լեզուն նրա համար է, որպէսզի մարդիկ հասարակական-քաղաքական իրենց հայեացքներն ու մտքերը միմեանց հաղորդեն, փոխադարձաբար իրար հասկանան ու հասարակական կեանքը վարեն: Այս ամէնը, ըստ քերականի, արուում է բանաւոր խօսքի միջոցով: Քերականը ճանաչում է խօսքի երկու տեսակ՝ բանաւոր եւ գրաւոր: Քանի որ ինչպէս բանաւոր, այնպէս էլ գրաւոր խօսքը ենթակայ է փոփոխման, այսինքն՝ մարդիկ կարող են չեղուել լեզուի համար հանրօրէն ընդունուած ուղղախօսութեան եւ ուղղադրութեան կանոններից եւ սխալ արտասանել կամ գրել բա-

1. Մ. ՉԱՄՉԵԱՆ, 1859, Մոսկուա, էջ 1:

2. Մ. ՉԱՄՉԵԱՆ, 1830, Կարկաթ, էջ 1 (յառաջաբանը):

ուերը, ուստի անհրաժեշտ է դառնում ունենալ խօսքը ղեկավարող մի արուեստ: Այդ արուեստը, ըստ Մ. Չամչեանի, քերականութիւնն է, որը պէտք է կառավարի խօսքը: «Քերականութիւնն է, - գրում է նա, - արուեստ ուղիղ խօսելոյ՝ եւ անսխալ շարադրելոյ»³:

Չամչեանի դերը լատինաբանների դէմ տարուող պայքարում

Նախորդ քերականներին նուիրած շարադրանքում մենք խօսեցինք լատինամուտ օտար եւ հայ քերականների ու քարոզչների մասին: Ասացինք, որ նրանք իրենց նորահար «Հայոց լեզուով» աղաւաղում էին մեր դարաւոր լեզուի օրէնքներն ու կանոնները, ուստի հայ մտաւորականները, առաւելապէս քերականութիւնների հեղինակները սկսել էին ուժեղ պայքար ծաւալել այդ հոսանքի թէ՛ օտար եւ թէ՛ աղաւաղ քերականների ու քարոզչների դէմ՝ յանուն Հայոց լեզուի անաղարտութեան ու նրա դոյաւեւման:

Այս թե՛ պայքարից ձեռնպահ չի՝ մընում նաեւ հայ քերականագէտ Հ. Մ. Չամչեանը:

Սոսկելով 17-18րդ դարերի ընթացքում բուն Հայաստանում եւ Հայաստանից դուրս տիրող տնտեսական ու քաղաքական իրադարձութիւնների մասին՝ բանասէր Սարգսեանը գրում է. «Քանի որ բոլորն էլ Ասկերեաններ չէին, որ կարենային ինքնուրոյնաբար կարգաւ եւ հասկանալ մեր ոսկեղենի լեզուն, յատկապէս միջին շարադրանքը, սուրբ Գիրքը, ապա անհրաժեշտ էր կանոնաւոր քերականութեան մի ձեռնարկ, որը բաց անէր մեր անցեալի մատենագրութեան լեզուական գանձերը եւ սովորողների սեփականութիւնը դարձնէր: Ահա այս դերը կատարեց Հ. Մ. Չամչեանը՝ 1779 թ. հրատարակելով «Քերականութիւն Հայկազեան լեզուի» գիրքը⁴:

Մի՞թէ բանասէր Բ. Սարգսեանը իրաւացի է: Իրօ՞ք Հայաստանում չկային բուն հայերէնի օրէնքներով գրուած քե-

րականութեան ձեռնարկներ եւ Մ. Չամչեանի վերոյիշեալ գիրքը առաջինն էր... Իհարկէ ոչ: Հայաստանում կային լատինաբանների ոգուն հակառակ եւ դասական հայերէնի ոգուն հարադատ ու նրա օրէնքներով յօրինուած քերականութեան ձեռնարկներ: Այդ մասին մենք արդէն խօսել ենք⁵: Այդ ձեռնարկները յաջողուած դործեր էին եւ տասնեակ տարիներ յաջողութեամբ սպասարկում էին բուն Հայաստանի եւ աշխարհի այլեւայլ ծագերում սիրուած հայկական դպրոցների ուսանողութեանը:

Բանն այն է, որ Չամչեանից առաջ եղած քերականները՝ Սիմէոն Զուղայեցին, Մխիթար Սեբաստացին եւ Պաղտատար Դպիրը իրենց քերականութիւնների մէջ բերուող օրինակները ոչ բոլոր դէպքերում էին վերցրել մեր դասական մատենագրութիւնից, կամ եթէ վերցրել էին, ապա խստութեամբ ընտրութիւն չէին կատարել, աւելին, օգտուել էին նաեւ օտար լեզուի աղբեղութեամբ ողողուած հեղինակների երկերից: Այս պատճառով էլ մեր դասական գրականութեան գոհարները՝ լեզուի տեսակէտից անթերի ու անաղարտ պատառիկները չէին մտել քերականների աշխատութիւնների մէջ: Բնական է, որ նրանց բերած օրինակները չէին կարող սովորողներին մէջ բուռն սէր արթնացնել դէպի անցեալի հայ մատենագրութիւնը, նրա ոսկեղենի լեզուն, առաւել եւս չէին կարող ուսանողներին սովորեցնել դասական հայերէնի լեզուական օրինաչափութիւններն ու կանոնները:

Բացի այս, վերոյիշեալ քերականներից ոմանք, հաշուի առնելով լատինաբանութեան բուռն գրոհները Հայոց լեզուի վերայ, ժամանակի քաղաքական հանգամանքները եւ այլ ուրիշ նրբանկատու-

3. ՉԱՄՉԵԱՆ, 1859, Մոսկուա, էջ 82:

4. ՍԱՐԳՍԵԱՆ Բ., Երկաթիւրամեայ գրականական գործունէութիւն եւ նշանաւոր գործիչներ Վեհմեփոյ Միքայելեան Միքայելեան, Վեհմեփոյ, 1905, էջ 61:

5. ՏՆԱ ՍԻՄԵՈՆ ԶՈՒՂԱՅԵՑԻ, Միքայել Սեբաստացի եւ Պաղտատար Դպիր:

թիւններ, դիտակցաբար հայերէնի օրէնքներից որոշ նահանջներ էին կատարել եւ հանդուժել էին հայերէնին խորթ լեզուական ձեւեր ու սահմանումներ: Այս գաղափարը ճիշտ է նկատել հենց ինքը՝ Մ. Չամչեանը: Այս առթիւ նա իր գրքի հրատարակութիւններից մէկի առաջաբանում գրում է. «Բայց քանզի յայնմ ժամանակի նորոգ հանդիսացեալ էին բազում քերականութիւնք բազում հեղինակաց, որք բազում ինչ նոր եւ օտար խառնեալ էին ի լեզուն մեր, եւ ոչ էր հնար հակառակ նորին աւանդել կանոնաւոր բուն նախնի ուղղախօսութեան»: Կամ՝ «... ջանացաւ հայրն մեր (Մխիթար Սեբաստացին - Հ. Մ.) այնպէս կարգել ըզքերականութիւն իւր, զի մի ներհակ երեւեսցի նոր հեղինակաց...»⁶:

Այս մասին մենք մանրամասնօրէն խօսել ենք Մ. Սեբաստացուն նուիրուած երթագրութեամբ: Մենք ամբողջութեամբ համաձայն չենք Մ. Չամչեանի կարծիքին, բայց նրա ասածների մէջ, անշուշտ, որոշ ճշմարտութիւն կայ: Հաշուի առնելով այս ամէնը՝ Մ. Չամչեանը բոլորովին այլ ճանապարհով դնաց: Նա ամենայն բարեխղճութեամբ կարգաց մեր 5-13րդ դարերի ձեռագիր ու տպագիր մատենաները եւ խստադոյն ընտրութիւն կատարեց՝ այնտեղից վերցրեց միայն լաւն ու անթերի եւ դրանից էլ զատեց լեզուական տեսակէտից միայն կատարեալն ու անաղարտը, շարադասական տեսակէտից կանոնաւորն ու հարադատը: Մի խօսքով՝ քերականագէտ Մ. Չամչեանն ընտրեց այնպիսի նախադասութիւններ ու խօսքեր, որոնք լիովին համապատասխանում էին մեր շարահիւսական համակարգի աւանդական կանոններին ու հենց դրանք էլ զննութեան նիւթ դարձրեց: Ինքը՝ քերականը եւս նշում է այս շատ կարեւոր հանգամանքը. «Գիտելի է նախ, - գրում է նա, - զի յընտրել մեր զնոսին հայեցաք զզուլութեամբ ի պէս-պէս ձեռագիրս. եւ որք ընտիրք էին, նոցին հետեւեցաք. եւ ի նոցունց զընտիրսն առաք»⁷:

Բացի այս, քերականը գտնում է, որ

Արբահօր պատգամը, որը նշուած է նրա քերականութեան գրքում, կատարելու համար ձեռնարկում է այս գործը, որպէսզի քերականութեան ուսուցումը վարի ըստ մեր մայրենի լեզուի կանոնների եւ ուսանողներին նոյն լեզուի ընտիր օրինակների վրայ վարժեցնի: Ըստ Չամչեանի, միայն այս ճանապարհով հնարաւոր կը լինի սիրել տալ մայրենին եւ դրանով էլ հենց կասեցնել օտարամուտ ձեւերի մուտքը մեր լեզուի մէջ: Բացի այս, Չամչեանի ժամանակ լատինաբանների պայքարը որոշ չափով թուլացել էր, փոխուել էին քաղաքական հանգամանքները ի վնաս լատինաբանների:

Լատինաբանութեան դէմ տարուող պայքարին անդրադառնալով՝ ականաւոր հայ լեզուաբան Հր. Աճառեանը գրում է. «Միքայել Չամչեանի «Քերականութիւն Հայկազեան լեզուի» աշխատութեան տըպագրութեամբ (1779 թ.) լատինաբանութիւնը դադարում է գործելուց»⁸:

Որ Չամչեանի վերոյիշեալ գրքի լոյս ընծայումը մեծ դեր խաղաց Հայոց լեզուի պահպանման ու զարգացման եւ դրան հակառակ լատինաբանութեան վերջնական ջախջախման գործում, անհերքելի փաստ է:

Լատինաբանութիւնը, որ ստեղծուել էր յատուկ նպատակներով եւ Հայաստանում, Հայաստանից դուրս ահադին վնասներ պատճառեց հայերէնի զարգացմանն ու կարգաւորմանը, իհարկէ, մի գրքի լոյս ընծայումով չէր կարող ջախջախուել ու ասպարէզից դուրս մղուել, եթէ չլինէին լուրջ նախադրեալներ: Արդ՝ որո՞նք էին այդ նախադրեալները:

Լատինաբանութիւնը, անշուշտ, մի լուրջ եւ ահաւոր վտանգ էր, որ ծառացել էր Հայոց լեզուի, հետեւապէս եւ հայ ժողովրդի ինքնուրոյնութեան դէմ: Նրա վերջնական նպատակն էր խեղաթիւրել, աղաւաղել ու յետագայում խաղաղ վերա-

6. Մ. ՉԱՄՉԵԱՆ, Վեհմեփոյ, 1779, յառաջաբան:

7. Մ. ՉԱՄՉԵԱՆ, Բ. Հ. Լ. Կալկաթա, 1830,

8. Հ. ԱՃԱՌԵԱՆ, Հայոց լեզուի պատմութիւն, 2րդ մաս, Երեւան, 1951, էջ:

ցնել Հայոց լեզուն՝ տեղը դնելով լատիններէնը, որպէսզի այդ միջոցով հնարաւոր լինէր յետագայում ձուլել նաեւ Հայերին: Այս թաքնուած նպատակը՝ մեր ժողովրդին սպառնացող վտանգը ժամանակին ճիշտ կռահեցին Հայ առաջաւոր ու ազգի նուիրուած մտաւորականները, ուստի եւ սկսեցին դրա դէմ լուրջ ու անխնայ պայքար կազմակերպել: Լատինաբանութեան դէմ տարուող պայքարը տեղի է ունենում երկու ճակատով՝ ա) քերականութիւնների եւ դպրոցական ուսուցման միջոցով Հայոց լեզուն խաթարումից, օտարամոլութեան ներթափանցումից անաղարտ պահելու, բ) ժողովրդական լայն զանգուածների կրօնական միտքը նախապատրաստելու ուղղութեամբ:

Հայոց լեզուի անաղարտութիւնը պահպանելու հարցում առաջին տեղը բռնում են քերականութեան դրքերը, ձեռնարկները եւ դպրոցը: Ահա թէ ինչու առանձին Հայ մտաւորականներ սկսում են այս ուղղութեամբ լուրջ քայլեր ձեռնարկել: Այս մարզում լատինաբանութեան դէմ պայքարողներից առաջինը, ինչպէս ասել ենք, եղաւ Սիմէոն Զուղայեցին, որից յետոյ աւելի կազմակերպուած, ակնյայտ ու անխնայ պայքար մղելու ձգտումով հրապարակ եկաւ Մխիթար Սեբաստացին, ըստ որում նա ոչ միայն անդիջում պայքար մղեց, այլեւ իր աշակերտներին եւ ուխտի միաբանութեան իր ժամանակի ու յետագայ բոլոր անդամներին կտակեց անողորմ ու հայրենուէր մարտնչել օտարամոլութեան դէմ՝ յանուն Հայոց լեզուի մշակութիւն անաղարտութեան ու գոյութեան պահպանման:

Հաւատարիմ մնալով իրենց ուսուցչի սուրբ պատգամներին՝ միաբանութեան անդամները անդաւաճան կրթութեամբ սկսեցին Հայոց լեզուի քերականութիւնը եւ օտար լեզուներից կատարուող հայերէն թարգմանութիւնները զտել օտարամուտ, մեր լեզուի ներքին օրինաչափութիւններից չբխող ու բռնազբոս լեզուաւորական եւ շարադասական մոլորումներ:

Րից: Հակառակ լատինաբանների, նորից մեր քերականութիւնները լցուում են դասական մատենագրութեան նիւթերով, նորից վերականգնուում են կամայականօրէն վտարուած մեր մայրենի լեզուի օրէնքներն ու կանոնները, անխնայ ջրնջուում են մեր լեզուի մէջ մուտք գործած եւ խորթ օրէնքներն ու սահմանումները: Այս նոյն ոգով կատարուեցին նաեւ այդ օրերի թարգմանութիւնները, որոնցից շատերը փայլում են իրենց հայկաբանութեամբ: Մեր գրչի մշակներն սկսեցին դրել մաքուր հայերէնով, միայն մայրենի լեզուի կանոնների համաձայն: Այս դործում աչքի ընկան միաբանութեան անդամներից շատերը՝ Ի. Խաչատրեանը, Մ. Անանեանը, Վ. Ասկերեանը, Մ. Զամչեանը, յատկապէս վերջին երկուսը՝ Վ. Ասկերեանն իր թարգմանութիւններով, իսկ Մ. Զամչեանն իր Հայոց լեզուի քերականութեամբ ու պատմութեամբ:

Այսպիսով, սա ոչ թէ անհատ մարդկանց կողմից մղուող եղակի պայքար էր օտար անհատ բռնադատիչների դէմ, այլ հաւաքական ճակատամարտ էր՝ յանուն գոյութեան պահպանման: Այդ պայքարը ողջ Հայ ժողովուրդի, նրա լեզուական մշակութիւնի պայքարն էր: Այդ պայքարն առերեւոյթ թուում էր խաղաղ ու «անմեղ», բայց ըստ էութեան դա կենաց ու մահու մի դժուարին ու դաժան դատարար էր:

Եթէ յանուն լեզուի պայքարում մեր մտաւորականները չէին կարող ներդրուել ժողովրդի հոծ զանգուածներին, որովհետեւ ժողովուրդը գրագէտ չէր, եւ դպրոցների թիւը թերեւս խիստ սահմանափակ էր ու եղածներն էլ համաժողովրդական օջախների չէին վերածուած, ապա այդ բանը մեծ յաջողութեամբ կատարուում էր կրօնի ուսուցման եւ քարոզի ուղղութեամբ: Կրօնա-դասանաբանական հարցերը ժողովրդի հոծ զանգուածներին հասանելի էին դառնում ազգանքէր մարդկանց բանաւոր ու կենդանի քարոզների միջոցներով: Այդ ժամանակի հայ առաջաւոր հոգեւորականներին յա-

ջողուել էր Հայ ժողովրդի մեծամասնութեան մէջ ատելութիւն սերմանել դէպի լատինաբան քարոզիչները:

Սիմէոն Զուղայեցու եւ լատին քարոզիչ Կղեմէս Գալանոսի հանդիպումն ու սուր, կրքոտ բանավէճը Կոստանդինուպոլսում, անշուշտ, ոչ առաջինն էր եւ ոչ էլ միակը: Լատին քարոզիչները Հայաստանում շատ հայրենասէր եւ գիտակ մտաւորականների են հանդիպել եւ նրանց կողմից հակահարուածի արժանացել:

Յաւն այն է, որ լատինաբաններին օգնում եւ օժանդակում էին նաեւ հայրենադաւ, մեր ազգային արժանապատուութիւնը յանուն իրենց անձնական շահերի եւ փառամոլութեան ոտնահարող առանձին հայ հոգեւորականներ:

Այս թեժ պայքարի ժամանակ հայ ազգանուէր շատ դործիչներ, յենուելով ժողովրդական զանգուածների հայրենասիրական տրամադրութիւնների վրայ, լատինաբանների դէմ լուրջ խոչընդոտներ էին ստեղծում՝ ինչպէս բացայայտ, ճակատ առ ճակատ մենամարտելով, այնպէս էլ այլ ճանապարհներով: Այսպիսով, ժողովուրդն ու լատինամոլները հակառակորդ հայ հոգեւորականները հանդէս էին դալիս միասնաբար եւ սա յուսահատեցնում, ուստի եւ կատաղեցնում էր յենադուրկ թշնամիներին: Գալանոսը, որ յայտնի եւ ակնաւոր լատին քարոզիչ էր, պետական դործիչների եւ շատ բարձրաստիճան հոգեւոր եւ աշխարհիկ պաշտօնեաների հետ սերտ կապերի մէջ, խօսելով Սիմէոն Զուղայեցու մասին, այսպիսի մի խոստովանութիւն է անում. «Եւ քանզի ունէր համբաւ ամենախմաստ վարդապետի առ ժողովուրդս, բազում աշակերտս մոլորեցուցանէր...»:

Ս. Զուղայեցին, սակայն, միակ հակառակորդը չէր լատինաբանութեան եւ լատինամոլների դէմ տարուող պայքարում: Գալանոսն իր նշուած աշխատութեան մէջ հայ մտաւորականներին բաժանում է երկու բանակի՝ հակառակորդների, որոնց անխնայ պախարակում է, եւ

կողմնակիցների, որոնց ջերմօրէն ներրողում է:

Լատին կրօնաւորները դէմ տարուող պայքարը քանի դնում, այնքան բորբոքուում եւ սուր բնոյթ է ստանում. ժողովրդական հոծ զանգուածները ոչ միայն երես են թեքում ազգային եւ օտար, յատկապէս օտար հոգեւորականներից, այլեւ սկսում են բացայայտօրէն հալածել նրանց: Կղեմէս Գալանոսը, մեր ներքին դործերին անդուսպօրէն միջամուխ այդ մարդը, որ մի ժամանակ մեծ հեղինակութիւն էր վայելում Հայաստանում, յետագայում հեղինակազուրկ է դառնում: Ժողովուրդն սկսում է նրան հալածել: Բանն այնտեղ է հասնում, որ նա, Փրանսական զեսպանի միջոցով, ձերբակալուելուց հաղիւհաղ ազատուելով, փախչում է Հոռոմ:

Ինչպէս տեսնում ենք, քաղաքական հանգամանքները բոլորովին փոխուել էին, եւ ժողովուրդները դիտակցել էին այն վտանգը, որ դալու էր այդ մարդկանցից, ուստի կատարել էին լրիւ չրջադարձ՝ հայրենին պաշտպանելու համար: Նման պայմաններում լատինաբանները չէին կարող հաշուի չառնել այդ դժուարութիւններն ու ընդվզումները, որոնք, ինչպէս այլ երկրներում, այնպէս էլ Անդրկովկասում ու յատկապէս Հայաստանում, քանի դնում այնքան ծաւալուում ու ահադնանում էին: Վերջապէս, քարոզիչներն զգացին ճամարտութիւնն այն բանի, որ ունէ ժողովրդի հնարաւոր չէ պարտադրել օտար ու անհասկանալի, կամայականօրէն յորինուած լեզուաձեւեր եւ օրէնքներ, որ լեզուն հասարակական երեւոյթ է, նրա ստեղծողը ժողովուրդն է, իսկ ժողովուրդն էլ իր արեան գնով կը պաշտպանի իր մայրենին, իր մտքի ու հոգու հարադատ թարգմանին:

Բնական էր, որ նման պայմաններում անհրաժեշտ էր մի ուժգին ու վերջնական դրոհ՝ արդէն թուլացած եւ յենարանը

9. Կղ. ԳԱԼԱՆՈՍ, Միաբանութիւն Հայոց սուրբ եկեղեցւոյն ընդ մեծի սուրբ եկեղեցւոյն Հոռոմի մայ, Հոռոմ, 1658, էջ 17ա:

կորցրած հակառակորդի վրայ: Ահա այսպիսի իրադրությունն պայմաններում Հ. Մ. Չամչեանի դործի լոյս ընծայումը իրօք որ դրական, մշակութային մի խոշոր երեւոյթ էր և այն վերջնականապէս խորտակեց լատինարանութեան երազանքները: Այս առումով ահա ճիշտ են ակադեմիկոս Հր. Աճառեանի և այլոց կարծիքները Մ. Չամչեանի դրքի կատարած դերի մասին:

Շարահիւսութեան քննարկումը

Հետեւելով հայ շարահիւսութեան պատմութեան ընթացքում տեղի ունեցած տեղաշարժերին և բերած նորոյթներին՝ Չամչեանը նոյնպէս դիտարկեց է շարահիւսութեան կարեւոր դերը լեզուի ուսուցման և ուսումնասիրութեան, խօսք կառուցելու բարդ ու դժուարին դործում, ուստի և բարձր է գնահատել զայն: Ըստ Չամչեանի, սովորողները դրքի առաջին և երկրորդ բաժիններում ուսումնասիրելու են ձեւաբանութիւնը, գաղափար են կադմելու գոյականի, ածականի, բայի, մի խօսքով՝ խօսքի մասերի էութեան, հոլովման, խոնարհման, բառերի տեսակների և բաղմաթիւ հարցերի մասին, իսկ շարահիւսութեան բաժնում՝ նրանք պէտք է ծանօթանան խօսքի ութ մասերի (Չամչեանը խօսքի ութ մաս է ճանաչում), գաղափար կապակցութիւնների և համաձայնութեան, այսինքն՝ շարահիւսական դեր-սեւորումների հետ:

Ձեւաբանութեան մասը հեղինակը համարում է «գուռն լեզուիս Հայոց» և «գործարան համօրէն բառից», որովհետեւ այս բաժնի շնորհիւ է, որ բոլոր բառերը տալուում, յղուում ու կոկուում են և հոլովման ու խոնարհման միջոցով պատրաստուում խօսքի կառուցման համար: Քերականը ճիշտ է հասկացել ձեւաբանութեան դերը և փոխադարձ կապը շարահիւսութեան հետ: Պարզ է, որ ձեւաբանութիւնը նախապատրաստում և մշակում է շարահիւսութեան կառուցի ողջ նիւթը, առանց որի շարահիւսութիւնը

նր դժուար կացութեան մէջ կը դրուէր: Պարզ է նաեւ այն, որ առանց շարահիւսութեան էլ քերականութեան այս բաժինը (ձեւաբանութիւնը) անկատար կը մընար, և խօսքի կառուցումը տեղի չէր ունենայ:

Ի դէպ, ասեմք, որ Չամչեանն էլ, իր նախորդներին հետեւելով, միջարկութիւնը, շարկապը և մակբայը դնում է համաձայնութեան մէջ: «Այլ գիտելի է, - դրում է Չամչեանը, - զի զհամաձայնութեան նախադրութեան, մակբայի, միջարկութեան և շարկապի, զոր ինչ արժան էր գիտել, խօսեցաք առաջին և յերկրորդ մասին»¹⁰:

Շարահիւսութեան բաժնում Չամչեանը միջարկութեան մասին այս ակնարկից բացի՝ ուրիշ բան չի ասում: Ձեւաբանութեան բաժնում Չամչեանը միջարկութիւնն այսպէս է բացատրում. «Չսա, ումանք ընդ մակբայս դասեն, բայց ոչ երեւի այս ուղիղ. զի մակբայն ցուցանէ զպարագայս գործողութեանցն, իսկ միջարկութիւնն ի միջի արկեալ ի բանս՝ յայտ առնէ զընական կիրս հոգւոյն, որպիսի են կիրք ուրախութեանց, տրտմութեան, ցաւոց, երկիւղի և այլն»¹¹: Քերականը բերում է մի նախադասութիւն («Բաբէ՛, որչափ է որովայնամոլութեան բնաւորութիւն») և բացատրում, որ միջարկութիւնը (բաբէ) ոչ թէ ցոյց է տալիս գործողութեան պարագան, այլ՝ հոգու կիրքը: Լաւն այն է, որ հեղինակը տալիս է միջարկութեան տասնվեց տարատեսակ (էջ 78-80), որոնցից երկուսը (կոչականն ու բացականչականը) յետագայում մտնում են մեր քերականութիւնների մէջ և դառնում նոր գասակարգման հիմնաքարերը: Սակայն, ինչպէս ասուեց, այս ամէնն արուել է ձեւաբանութեան բաժնում, հեղինակը խոստովել է շարահիւսութեան մէջ այս մասին որեւէ բան ասել միջարկութեան մասին:

10. Մ. ՉԱՄՉԵԱՆ, Քերականութիւն Հայկազեան լեզուի, Մոսկուա, 1859, էջ 145:

11. Մ. ՉԱՄՉԵԱՆ, Վեհափի, 1859, էջ 145:

Ի դէպ, պէտք է ասեմք, որ միջարկութեան հարցը ինչպէս արդի քերականութիւններում, այնպէս էլ լեզուաբանական աշխատութիւններում թերեւս չի լուծուած: Իրօք, միջարկութիւն ցոյց տուող բառերն ի՞նչ են, նախադասութեան անդամ են, եթէ չեն, ապա ի՞նչ են: ... Ձեւական տեսակէտից միջարկութիւնը նախադասութեան միւս անդամների հետ շարահիւսօրէն չի կապակցուում, ինչպէս նաեւ ամբողջովին չի էլ անտեսուում, որովհետեւ նախադասութեան մէջ նա ինչ որ դեր խաղում է, նրան երանգ է տալիս, բացայայտում է խօսողի հոգեկան կիրքն ու զգացմունքները: Օրինակ՝ վա՛յ, վա՛յ, իմ անմեղ գառնուկներ, - մղկտաց Հասոն¹²: Առանց այս վա՛յ, վա՛յ բացազանչութեան՝ չէր հասկացուի այն, ինչ որ հեղինակն է ցանկացել ասել:

Կարծում ենք, որ չի կարելի այս հարցի կողմով անցնել: Մեր կարծիքով, Չամչեանը ճիշտ է վարուել, որ մի շարք բառեր դրել է շարահիւսութեան բաժնում, սակայն չի փորձել տալ դրանց քերականական կապը միւս բառերի առնչութեամբ և դրանց դերն ու նշանակութիւնը նախադասութեան ներսում: Կարծում ենք, որ «Նախադասութեան երկրորդական անդամներ» հասկացութիւնը պէտք է վերանայուի և վերոյիշեալ բառերը կա՛մ պէտք է դասուեն երկրորդական անդամների շարքը, կա՛մ «երկրորդական անդամներ» հասկացութիւնը պէտք է երկու կարգի բաժանուի և այդ կարգերից մէկն ու մէկի մէջ մտցուի նաեւ ձայնարկութիւնը:

Ինչ վերաբերուում է շարկապին, պէտք է ասել, որ խօսքի այս մասը թէեւ ձեւաբանական կարգին է վերագրուում, սակայն մասնակցում է նախադասութիւնների և նախադասութեան առանձին անդամների կապակցութեանը: Այսպէս նաեւ մակբայն ու նախադրութիւնները: Սըրանք ևս որեւէ ձեւով մասնակցում են խօսքի կառուցմանը՝ հանդէս գալով նախադրութեան երկրորդական անդամների դերով, կա՛մ մասնակցելով հոլովակապ-

մութեան գործին՝ լրացնելով հոլովների պակասն ու թերին: Արդ, քանի որ շարկապը կապակցում է նախադասութեան անդամներ և նախադասութիւններ, ուղում ենք այդ մասին մի քանի խօսք ասել:

Շարկապի բնորոշումն ու քերականական նշանակութիւնը՝ Չամչեանը տալիս է ձեւաբանութեան երկրորդ բաժնում, որ կոչուում է «գորպիսութիւն սոցին» (էջ 140-141). «Շարկապն է մասն բանի, - դրում է քերականը, - որ յարէ և միաւորէ ընդ միմեանս զայլ մասունս բանի, նաեւ զնոյն իսկ դրանս» (էջ 140): Չամչեանը տալիս է շարկապների տասնվեց տարատեսակ: (Մոսկուա, 1859 թ., էջ 77-79): Նա նկատել է շարկապների զեղման դէպքերը: Օրինակ՝ «Թէպէտ փակեաց և կնքեաց զդրունս եկեղեցեաց ընդ ամենայն աշխարհն Պարսից, (բայց) նոքա զամենայն տուն եկեղեցի արարին»: (էջ 141): Բերուած նախադասութեան մէջ զեղչուած է բայց շարկապը, որն առնուած է փակագծերում: Այդ շարկապը հնարաւոր է վերականգնել: Այսպիսով, Մ. Չամչեանը դիտարկեց ու ճանաչել է համադասական անշարկապ նախադասութիւնների փաստը մեր լեզուի մէջ, հետեւաբար և մեր շարահիւսական համակարգում: Քերականը ձեւաբանութեան բաժնում միայն թուարկում է շարկապների տեսակները և բերում է օրինակներ: Շարկապի մասին սրանից աւելի այլեւս ոչինչ չի ասում, բայց այսօրն էլ բաւական է որոշ եզրակացութեան յանդուր: Չամչեանը ճիշտ է նկատում, որ շարկապը նրա համար է, որ բառերը և նախադասութիւնները միմեանց հետ կապակցի:

Քերականը չի տարբերակում շարկապների այժմ ընդունուած երկու հիմնական տեսակները՝ համադասական և ստորադասական հասկացութիւնները, սակայն շարկապների տեսակները թուարկելիս և օրինակներ բերելիս միայն զգացնել է տալիս, որ ճանաչում է դրանց դերը բոլոր կա-

12. Վ. ՓԱՓԱՋԵԱՆ, «Լուր-դաւ-լուր»:

պակցման խմատի: Այսպէս՝ բաղձիւսական եւ տրոհական շաղկապները կապակցում են համադասական նախադասութիւնները: օրինակ՝ ի բաց փախիցուք ի չարեաց, եւ զհետ երթիցուք բարեաց, նա զհետեան սպառնացաւ: զի կամ ի դժնդակացն երկուցեալ՝ դայցեմք ի լաւութիւն, եւ կամ լաւագունիցն յոյս ունելով՝ բարւօք զկեանս մեր տնօրինիցեմք» (Մոսկովա, 1859 թ., էջ 77):

Նոյն կերպ են տրուած նաեւ բացառացական եւ անկատարական շաղկապները: Օրինակ՝ վիշտքն անցանեն, բայց աւետիք երանութեանցն կան մնան: Ոսկի թէպէտեւ անբան է ձայնիւ, սակայն (սա էլ քերականը համարում է բացառացական) մեծապէս աղաղակէ արդեամբ: (նոյն տեղում) Այս կարգին են պատկանում նաեւ այլ խմբի պատկանող շաղկապները, բայց մենք բաւականանա՞նք այսքանով:

Ստորագասական շաղկապները դրուած են քէական եւ քարմատար շաղկապների խմբերում: Այսպէս՝ Եթէ չիք սրբութիւն սրտի, պահք չեն ընդունելի: Մի տար դիտել թշնամույն՝ թէ ի խռովութեան են ընդ քեզ պահապանք քո»: (նոյն տեղում, էջ 78 եւ 79):

Ի դէպ, ասենք, որ Չամչեանը տրամաբանօրէն ճիշտ է վարդուած, երբ մէջ բերուող նախադասութեան աւարտման համար որպէս դադարի նշան դնում է միջակէտը եւ այն էլ փակագծերից առաջ, իսկ մէջբերուած հեղինակի անունը դնում է շղաղբով, իսկ դրա վերջում՝ նոր միայն վերջակէտ:

Հետաքրքիր է Չամչեանի հայեացքը թարմատար շաղկապի մասին:

Գրաբարի շրջանի միւս քերականների մօտ, ինչպէս նշել ենք, թարմատար շաղկապները բոլորովին այլ էին, Չամչեանի մօտ՝ այլ: Չամչեանը թարմատար է հա-

մարում քէ, եքէ, զի, բա, որ եւ այլ ըստորագասական շաղկապները: օրինակները չի երեւում, թէ եւ այլն-ի տակ նա էլ ո՞ր շաղկապներն է հասկանում, կամ՝ ի՞նչ տարբերութիւն կայ թէական խմբի քէ, եքէ շաղկապների եւ թարմատար խմբի նոյն շաղկապների միջեւ: Թարմատար անուամբ բերուած մի օրինակը, սակայն, բացայայտում է այդ նրբութիւնը: Այսպէս՝ Ով ոք համարձակիցի, եթէ սուրբ իցէ ի մեղաց, նշանակում է որեւէ մէկը կարող է համարձակուել, թէ որ դերձ է մեղքերից: կարող է համարձակուել նա, ով որ դերձ է մեղքերից: կարող է համարձակուել նա, որ սուրբ է, մեղքեր չունի¹³: Չամչեանը թարմատար շաղկապի մասին մի ակնարկ էլ է անում: «Իսկ երբեմն, — գրում է նա, — ներհակ այսմ շաղկապս եւ իբր յաւելորդս դնի ի դրադէմ բանս եւ ի դերբայաւորս, զօ. Առ երկիւղի անկանելոյն գաբիւրեալ եւ թմբացի. ուր եւն ամենեւին թարմատար դնի»: (նոյն տեղում, էջ 141):

Եւ վերջապէս, քերականը դնում է, որ իսկ շաղկապը երբեմն խօսքի մէջ դրուում է ոճական առումով, ուստի եւ շաղկապի դեր չի կատարում: օրինակ՝ «ինքն իսկ է ամենայն յամենայնի աղբիւր բարեաց» (նոյն տեղում, էջ 141), որ պէտք է լինի՝ ինքն է ամենայն յամենայնի աղբիւր բարեաց:

Այլ օրինակներ. ա) «Քանզի արդարեւ գիտակ իսկ ես, թէ չար է արարն եւ ընդարոյս չարութիւնն մեր», բ) Չորոք իսկ զՅոյնս ոչ դանդաղիմ մայր կամ դայեակ ասել իմաստից: Ըստ քերականի, այս նախադասութիւններում իսկ շաղկապները ոճական առումով են գործածուել, որպէսզի խօսքը դարդարեն:

(Շար. 1)

ՅԱԿՈԲ ՄԿՐՏԻՉ ՄԵԻԹԱՐԵԱՆ

ՏԱՆԹԷ ԵՒ ԻՐ ԳՈՐԾԸ

(Շար. տե'ս «Բագմալէպ», 1969, ք. 4-7, էջ 109)

ԱՐՔԱՅՈՒԹԻՒՆ

Արքայութեան մէջ է որ քերթողը ցոյց կու տայ իր մեծ հանճարին ոյժը եւ ճարտարութիւնը, որովհետեւ անոր վայելքներն ու փառքերը՝ անճառ եւ անպատում են: Երկիր մ'է սա որ երբեք հետազոտուած չէ. «ակօսաջուրս ճեղքուած չէ բընաւ», կ'ըսէ Տանթէ. որով ստիպուած է ստեղծել զայն ոչինչէ, մտքի դարբնոցէն դուրս բերել նիւթ մը որ զուրկ է աւանդութիւններից, օրինակներից եւ նոյնիսկ անուններից: Դժոխքին ու ֆաւարանին համար իրեն կաղապար ունեցած է երկիրս ու մարդկութիւնը, որոնք այն հրէշային աշխարհներուն մէջ նկարագրուած են գրեթէ միեւնոյն գիծերով ու գոյներով: Այն տեսարանները շատ քիչ կը տարբերին սովորականներից, եւ անձերը, թէ եւ ալյանդակուած բուռն ցաւերէն, ջղաժին պրկումներէն, ալյափոխուած ախտերու հետեւանքներէն, սակայն մարդկային կերպարանքներ են, մեր ապրած աշխարհէն առնուած ամբողջապէս: Իսկ հոս, Արքայութեան մէջ, երկնքի անհուն միջոցները պիտի լեցնէ քերթողը հոգիներով, որոնք պիտի աստղադարձեն երկնային կամարը, եւ անոնց իւրաքանչիւրին պիտի յատկացնէ դէմք մը, խօսք մը, շարժում մը:

Ի՞նչ կերպարանքներով պիտի երեւնան անոնք. ի՞նչպէս պիտի կարենայ վերելակել քերթողը՝ մէկ երկրադունտէն միւսը: Դժոխքի վիրապներուն մէջ իջաւ անբնական միջոցներով, կամ շատ շատ, Գերիոնի քամակին վրայ նստած կամ Անտէոսի ափին վրայ կռթնած, որ թէեւ արտասովոր, բայց գոնէ երեւակայելի իրե-

րու կարգին մէջ է. սակայն ի՞նչպիսի սանդուխներ պիտի կրնան բարձրացնել քերթողը դէպի անդրադոյն սահմանները տիեզերքին: Ու ահա, երեւակայութեան մոզը, ստեղծող արուեստին հսկան, պիտի յաջողի բարձրանալ, սաւառնիլ անդրադոյն քան անկարելին եւ իր ձեռքերուն մէջ՝ իբր ճկուն նիւթ մը, պիտի ձեւանայ չխորհուածը ու չնախատեսուածը, անձանթը եւ անհունը, ամէնէն աւելի հեռաւոր եւ բաղձամարդ աշխարհը, ուր մարդս աւելի փոքր է քան հիւլէ մը եւ ուր կ'իշխէ միայն Ստեղծողին գաղտնի գործութիւնը: Եւ հոն վերելքը պիտի ըլլայ չողչողիլ մը, ժպիտը՝ փայլատակում մը, եւ ուրախութիւնը՝ կայծերու եւ բոցերու վառվռում մը, ուր աւելի բարձր պիտի բացուին յաւիտենական յարկին աստիճանները, մինչեւ որ լոյսը բորբոքի սիրոյ անեղր ուղիւնուսի մը մէջ, ուր պիտի խորասուզուին Աստուծոյ ծարաւի հոգիները: Եւ ահա փայլատակներ, լուսավառութիւններ, երփներանգ ծիածաններ, հեղեղօրէն ճաճանչումներ, բոցերու չողչողումներ, հիւսնալի զուգադրութեանց փոփոխակի յաջորդութեան մէջ, պիտի լեցնեն հորիզոնը երփներանգ գոյներու վայելքով զոր կարող ըլլայ երբեք տեսնել հոգի մը, իր դերմարդկային ըզմայլումներու երանդին մէջ:

Կարելի՞ է երեւակայել այս անհունութիւնը, երեւակայել աշխարհ մը ուր հողիները ապրին կեանք մը, որ ուրիշ բան չէ եթէ ոչ լոյս: Եւ իրականացնել այս յօրինուածութիւնը ճարտարապետական այնպիսի գիծերով եւ չափակցութեամբ,

13. Հ. Մ. ՉԱՄՉԵԱՆ, 1859, Մոսկովա, էջ 79: